

ըոսի(*) աղանդը, մինչև որ ուղղափառ հաղորդութեամբ մը չհրատարին անոր մոլորութենէն Ս. Գերեզմանին մուտքը արգիլուած է անոնց համար (Jean Mosch, L. S. S. էջ 28-29):

10. — Նորընծայ վանական մը Ս. Գերեզմանին մօտ (Չ. Դար). — Ս. Յարութեան տաճարին Ս. Խաչի մատրան մէջ, երիտասարդ նորընծայ վանական մը միամիտ դէմքով եւ խոժոռ աչքերով ու դողդոջուն ձեռքերով՝ կը թուէր թէ իր մէջը ունէր անհարկու խնդիր մը . . . այդ խնդիրը իր կեանքի խնդիրն էր: Իր երկչոտ սրտովը վախնալով խստակեաց կեանքին անաւոր ճգնութիւններէն ինքն իրեն կը մտածէր թէ պէտք էր շարունակել կամ դառնալ աշխարհի կողմը որ Սիրենան (Sirenes)(**) քոյրերու ձայնով իրեն կը հրաւիրէր: Ո՞վ գիտէ. նոյն իսկ ան աշխարհի մէջ չէ՞ր թողած երկու գեղեցիկ աչքեր՝ որոնց հրապուրիչ նայուածքը այդ վճռական օրուան մէջ, ծակած չէ՞ր իր սիրտը: Քրիստոսի Ս. Գերեզմանին իր այցելութեամբը վանականը կը յուսար որ պիտի փարատին իր անբաստուղութիւնները, պիտի հանդարտին իր անձկութիւնները և ինք մշտապէս պիտի հաստատուի փրկութեան ճանապարհին մէջ:

(*) Սեւեռոս պատրիարք Անտիոքի (512-543) որ Քրիստոսի մարմինը երկուուր կեանքի մէջ ապականացու կը դաւանի:

(**) **Սիրենայ**՝ առասպելական հրէսեր էին, կէս կին եւ կէս բռնուն կամ ձուկ: Ասոնք կը բնակէին սեպացեալ ժայռերու մէջ Կապրէ կղզիին եւ Իսալիոյ ափանց մօտ: Իրենց ձայնին բազում քեամբը համբողջներ կը հրապուրէին խառակներու վրայ: Ողիսես անգղայ դառնալով ամենց շեշտուէ՛ր իրենց վշտէն ծովը թափեցան (**ղիցարանութիւն**):